Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիլիթ Աբրիամյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Ջրային քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Ժնև քաղաք՝ 2023 թվականի 16-20 հոկտեմբերի. աշխատաժողովներ Ժնևի Ազգերի պալատում
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի ԵՏՀ՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE):

1. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն՝
   հոկտեմբերի 16-17-ին «Մակերևույթային և ստորերկրյա ջրերի փոխկապակցված կառավարման ազգային և անդրսահմանային ասպեկտները» թեմայով գլոբալ աշխատաժողովին,
   հոկտեմբերի 17-18-ին «Ջրային ռեսուրսների մոնիտորինգի ու գնահատման աշխատանքային խմբի տասնութերորդ հանդիպմանը,
   հոկտեմբերի 19-ին «Անդրսահմանային ջրային համագործակցությունը Արևելյան գործընկերության երկրներում. ձեռքբերումներ և առաջընթաց» թեմայով տարածաշրջանային սեմինարին:
2. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   Նիստերի ընթացքում քննարկված հիմնական թեմաներն էին՝
   1. Ինչու է անհրաժեշտ մակերևութային և ստորերկրյա ջրերի համատեղ կառավարումը. ակնկալվող օգուտներ և խնդիրներ դրա իրականացման հարցում,
   2. Ինչպես կարող է համատեղ կառավարումը իրականացվել ջրային ռեսուրսների անդրսահմանային համալիր կառավարման համատեքստում: Ինչպե՞ս կարող է դա նպաստել ջրային անդրսահմանային համագործակցության զարգացմանը,
   3. Ինչպես կարող է զարգացած և հստակ սահմանված անդրսահմանային ջրային համագործակցությունը նպաստել մակերևութային և ստորերկրյա ջրերի համատեղ կառավարմանը,

4. Հաջողված պատմություններն ու դասերը, որոնք քաղվել են ընդհանուր կառավարման պրակտիկաներ իրականացնելիս,
5. Անդրսահմանային ավազաններում մոնիտորինգի, գնահատման և տեղեկատվության փոխանակմանն աջակցություն՝ հիմնվելով գլոբալ փորձի վրա,
6. Կայուն զարգացման 6-րդ նպատակի 6.5.2 ցուցանիշի մոնիթորինգային հաշվետվության և դրա ներկայացման վերաբերյալ,
7. Ջրի կառավարման ինտեգրված և միջոլորտային մոտեցման խթանում բոլոր մակարդակներում,
8. Անդրսահմանային ավազաններում կլիմայի փոփոխությանը հարմարվելը. կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած մարտահրավերների հաղթահարում,
9. ԿԶՆ 6.5.2 2023 թվականի հաշվետվության հիմնական արդյունքների ներկայացում,
10. ԱլԳ երկրներում ԿԶՆ 6.5.2 վերջին հաշվետվությունից ի վեր առաջընթացի և քաղված դասերի ներկայացում, դրա արդյունքների օգտագործումը անդրսահմանային համագործակցությունը զարգացնելու համար,
11. Անդրսահմանային համագործակցություն, համատեղ մոնիտորինգ «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակում՝ Դանուբի, Դնեստրի, Խրամի-Դեբեդ և Ալազանի գետերի ավազանում,
12. Տարածաշրջանում անդրսահմանային համագործակցության ապագա հեռանկարներն ու կարիքները և այլն:

**3. Հանդիպումները, ելույթները.**

Նիստերին մասնակցում էին Ջրային կոնվենցիայի ինչպես կողմ հանդիսացող, այնպես էլ կողմ չհանդիսացող երկրների ներկայացուցիչները, ՄԱԿ ԵՏՀ անդամ պետությունների Շրջակա միջավայրի նախարարությունների և Վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչները, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպիսիք են՝ Եվրոպական հանձնաժողովը, Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը, Առողջապահական համաշխարհային կազմակերպությունը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը, ՄԱԿ ուսուցման և հետազոտությունների ինստիտուտը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջակա միջավայրի և առողջության եվրոպական կենտրոնը:

«Անդրսահմանային ջրային համագործակցություն ԱլԳ երկրներում. ձեռքբերումներ և առաջընթաց» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Գայանե Շահնազարյանը, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Մոլդովայի ներկայացուցիչները, ՄԱԿ ԵՏՀ բնապահպանական հարցերի պատասխանատու, ԵՄԶՆ Ազգային քաղաքականության երկխոսությունների ծրագրի ղեկավար Թամարա Կուտոնովան, ՄԱԿ ԵՏՀ բնապահպանական հարցերի պատասխանատու Ալեքսանդր Բելակուրովը, «ԵՄ-ն

շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի ղեկավար Ալեքսանդր Զինկեն, Տատյանա Դմիտրիևան (UNESCO) և Ջրի կոնվեցիայի քարտուղարության մի շարք ներկայացուցիչներ:

Աշխատաժողովին հանդես եմ եկել համառոտ ելույթով, որով շրջակա միջավայրի նախարարության անունից շնորհակալություն եմ հայտնել ԵՄ-ին՝ մշտապես աջակցելու և շարունակական համագործակցության համար, ներկայացրել եմ «ԵՄ ջրային նախաձեռնություն +» և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրերի շրջանակներում անդրսահմանային մոնիթորինգային համագործակցության և այլ գործընթացների իրականացման, մասնավորապես՝ Դեբեդ-Խրամի գետերի ավազանում 2009 թվականից ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող հայ-վրացական համատեղ մոնիթորինգի վերաբերյալ աշխատանքների մասին: Նաև ներկայացրել եմ ԿԶՆ 6.5.2 ցուցիչի վերաբերյալ նախորդ հաշվետվությունից ի վեր 2023 թվականի հաշվետվությամբ ներկայացված մոնիթորինգի արդյունքների առաջընթացը, վեր հանված խնդիրները և քաղված դասերը:

4. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նիստերին ներկայացվեցին թեմատիկ ելույթներ, վերոնշյալ թեմաների վերաբերյալ տարբեր երկրների փորձեր, դրանց ուղղությամբ կատարված աշխատանքներ, ևս մեկ անգամ կոչ արվեց ոչ անդամ երկրներին վավերացնելու Ջրային կոնվենցիան, հատկապես դրանից բխող արձանագրությունը՝ կարևորելով կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած մարտահրավերներին միասնական համատեղ ուժերով դիմակայելու հանգամանքը: Քննարկվեցին մակերևութային և ստորերկրյա ջրերի համատեղ կառավարման համար անհրաժեշտ և կարևոր միջոցառումների իրականացման ասպեկտները:

«Անդրսահմանային ջրային համագործակցություն ԱլԳ երկրներում. ձեռքբերումներ և առաջընթաց» տարածաշրջանային աշխատաժողովին քննարկվեց «ԵՄ ջրային նախաձեռնություն +» և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրերի շրջանակներում Դեբեդ-Խրամի գետերի համատեղ մոնիթորինգի համար Հայաստանի և Վրաստանի համապատասխան կառույցների միջև արդեն իսկ մշակված համաձայնագրի նախագիծը:

5. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

ՄԱԿ ԵՏՀ քարտուղարության կողմից բարձր գնահատվեց ԿԶՆ 6.5.2 ցուցիչի վերաբերյալ ՀՀ-ի կողմից ներկայացված 3-րդ հաշվետվությունը, այդ թվում՝ սահմանված ժամկետում քարտուղարություն ներկայացնելու հանգամանքը:

Ամփոփվեցին նիստերի ընթացքում քննարկված թեմաները, կազմվեցին եզրակացություններ, որոշվեցին և ամրագրվեցին նոր հանդիպումների վայրերն ու ժամկետները:

«Անդրսահմանային ջրային համագործակցություն ԱլԳ երկրներում. ձեռքբերումներ և առաջընթաց» տարածաշրջանային աշխատաժողովին ԵՄՋՆ Ազգային քաղաքականության երկխոսությունների ծրագրի ղեկավար Թամարա Կուտոնովան և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի ղեկավար Ալեքսանդր Զինկեն առաջարկեցին ծրագրի աջակցությամբ քննարկել առաջիկայում Դեբեդ-Խրամի գետերի համատեղ մոնիթորինգի համար Հայաստանի և Վրաստանի շրջակա միջավայրի նախարարությունների միջև համաձայնագրի կնքման հնարավորությունը:

*Գործուղվող*  *Լիլիթ Աբրահամյան*

*27.10.2023թ.*